

Մամիկոնեան Գրիգորի շինությունքը Չաքարեի եւ Իւանէի ձեռքը նորոգեալ, դարձեալ կիսաքանդ տեսանք, որ ժողովուրդն ընկերութեամբ կը շինէր եւ աւերակներուն մէջէն կը կենդանացներ եւ ինչ որ Գրիգոր չէր ըրած՝ այն կը հաւելուր: Ուսումնարան ի Զառիճ:

Ժողովրդեան միաբանական ոգի եւ ուսումնարան, այս երկու բան կարող են հայ ազգին կենդանութեան շունչ բերէր

Յամերաշխութիւն (solidarité) բառին գաղափարը չի կար, նոր բառ է, հայ երիտասարդութիւնը մտուց այս բառը լեզուին մէջ, ուստի գաղափարն էլ մտած է. վասնզի կօզնէ իւր ազգի երկրին հաւատարիմ եղբարց, իւր քիչ գիտութիւնը կ'ուտայ ձրիաբար նոցայ, որ ծարաւի են ուսման, իւր լուման կ'ուտայ նոցայ, որ նօթի են հացի: